ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ.ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 02 հուլիսի 2018թ

2018թվականի հուլիսի 02-ին, ժամը 11:00-ին Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին» և «Հավելավճարների կիրառման կարգը և չափը հաստատելու մասին» որոշումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Ջարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին,
2. հավելավճարների կիրառման կարգը և չափը հաստատելու մասին,

համայքնի ավագանու որոշումների նախագծերի քննարկում:

Օրակարգի 1-ին հարցի շուրջ Լ.Պողոսյանը ներկայացրեց Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքը: Գույքահարկի գծով թերակատարումը կազմել է 2652,9 հազ. դրամ: Երկրորդ եռամսյակի դրությամբ հողի հարկի գծով վճարումներ կատարվել են 96,6 % -ով, տեղական տուրքերը կատարվել են 111.9 %-ով: Վարձակալական հողերի վարձավճարների հավաքագրումը դեռևս դժվարություն է ներկայացնում:

Հանձնաժողովի անդամներն առաջարկեցին շարունակել տեղական տուրքերի, վճարների, հողի հարկի և գույքահարկի գծով խոշոր պարտավորություններ ունեցող անձանց՝ հարկային պարտավորություններ կատարելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը:

Որոշվեց՝

հավանություն տալ Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի 2-րդ հարցի շուրջ Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը ներկայացրեց, որ աշխատակազմի համայնքային ծառայողների հավելավճարների տրամադրման կարգը և չափը սահմանվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասով, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և հաստատվում է համայնքի ավագանու կողմից: Նա ներկայացրեց, որ օրենքով սահմանված կարգով հավելավճար սահմանվում է համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար՝ համայնքի ավագանու կողմից: Հավելավճար կարող է սահմանվել նաև համայնքային ծառայության ընագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար:

Լիդիա Պողոսյանը ավելացրեց, որ նախկինում ևս աշխատակազմի համայնքային ծառայողների համար ավագանու որոշմամբ սահմանվել են հավելավճարներ և նախագծի 2-րդ կետով նշված դրույթը՝ կապված համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվող հավելավճարը, 2018թվականի փետրվարի 1-ից կիրառելը ճիշտ է, քանի որ բխում է «Համայնքային ծառայության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների պահանջներից:

Որոշվեց՝

հավանություն տալ հավանություն տալ հավելավճարների կիրառման կարգը և չափը հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան